<<ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Ըմբշամարտի ծագումն ու զարգացումը, հայ անվանի ընբշամարտիկները

ԱՌԱՐԿԱ - ֆիզկուլտուրա

ՀԵՂԻՆԱԿ - Համլետ Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - <<Գագարինին միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Ըմբշամարտ մարզաձյի պատմությունը յ հայ անվանի մարզիկները:

1.Ըմբշամարտ մարզաձյի պատմությունը -ըմբշամարտ, երկու մարզիկների գոտեմարտի ընդհանուր անվանում, որը ներառում է մի քանի մարզաձյեր՝ հունահռոմեական, ազատ ոճի, ձյուդո յ սամբո, որոնցից առաջին երեքը մտնում են օլիմպիական խաղերի ծրագրի մեջ, ինչպես նայ ազգային ըմբշամարտերը:Ըմբշամարտը որոշակի կանոններ ունեցող մենապայքարային մարզաձյ է, ուր գոտեմարտողների նպատակն է մրցակցի նկատմամբ առավելության հասնել՝ միավորներ ձեռք բերելով կամ մրցակցի թիկունքը դիպցնելով գետնին: Վաղնջական ժամանակներից, երբ ըմբիշները գոտեմարտում էին, մարտերի տյողությունը սահմանափակված չէր յ շարունակվում էր մինչյ մրցակիցներից մեկի հաղթանակը: Ըմբշամարտում չկային քաշային կարգեր, յ բոլոր մարզիկները անկախ սեփական քաշերի զգալի տարբերությունից պարտավոր էին մարտ վարել միմյանց դեմ: Առավելությունը ստանում էր ավելի ծանր քաշ ունեցող մարզիկը, յ, բնականաբար, նա հաղթանակ էր տանում ավելի հաճախ: Ըմբշամարտի նման մրցումները տարածված էին բազմաթիվ երկրներում: Դրանք կազմակերպվում էին հին հունական օլիմպիական խաղերում, հայկական ազգային տոնախմբություններում, այլ երկրների ազգային տոներում յ հաճախ ավարտվում էին առավել թեթյ քաշ ունեցող մարզիկների պարտությամբ կամ զգալի վնասվածքներով, իսկ երբեմն՝ նույնիսկ մահով: Գործերի նման վիճակը մտահոգությունների առիթ էր տալիս, յ հիմնահարցերը սկսեցին լուծում ստանալ 1912-ից, երբ հիմնադրվեց Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան: Ֆեդերացիան սահմանեց քաշային կարգեր, ինչը հավասարություն մտցրեց մրցակիցների միջյ, պակասեցրեց վնասվածների քանակը: Սակայն այդ քաշային կարգերը անփոփոխ չեն: Ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով դրանք ենթարկվել յ շարունակվում են ենթարկվել փոփոխության:

Փոփոխվել են նայ գոտեմարտի տյողությունը, մրցամասերի քանակը, մարտերի ընթացքում տրվող ընդմիջումների քանակն ու տյողությունը յ այլն: Այսպես, մինչյ 1924-ը գոտեմարտերը շարունակվում էին մինչյ մարզիկներից մեկի հաղթանակը: 1924 թ-ին գոտեմարտի տյողությունը սահմանվեց 40 րոպե, որը բաժանվում էր 20 րոպեանոց երկու մրցամասի: 1928-ին գոտեմարտի տյողությունը կիսով չափ կրճատվեց, յ ըմբիշները մարտը վարում էին 10 րոպե կանգնած դրությունում, այնուհետյ՝ 3-ական րոպե՝ ծնրադիր վիճակում յ վերջին 4 րոպեն՝ նորից կանգնած դրությունում: 1933-ին գոտեմարտի տյողությունը դարձավ 10 րոպե, ընդ որում ըմբիշները գոտեմարտում էին միայն կանգնած դրությունում:

1945-ին ազատ ոճի ըմբիշների գոտեմարտը սահմանվեց 15 րոպե՝ առաջին վեց րոպեին կանգնած դրությունում, 3-ական րոպե՝ ծնկադիր ֆ վերջին 3 րոպեն՝ կանգնած դրությունում: 1950-ին այս կարգը սահմանվեց նաֆ հունահռոմեական ըմբշամարտի համար: 1956-ին գոտեմարտի տֆողությունը դարձավ 12 րոպե, որից առաջին 6 րոպեն՝ կանգնած դրությունում, 2-ական րոպե՝ ծնրադիր, վերջին 2 րոպեն՝ կանգնած դրությունում:

1961-ին գոտեմարտի տֆողությունը սահմանվեց 10 րոպե՝ 5-ական րոպեանոց 2 մրցամասով՝ մեկ րոպե ընդմիջմամբ:

1969-ին գոտեմարտի տֆողությունը դարձավ 9 րոպե՝ 3-ական րոպեանոց 3

մրցամասերով՝ երկու մեկ րոպեանոց ընդմիջումներով:

1980-ին գոտեմարտի տֆողությունը սահմանվեց 6 րոպե՝ երկու երեքական րոպեանոց մրցամասերով՝ մեկ րոպեանոց ընդմիջմամբ:

Հայ անվանի մարզիկները

Արթուր Գյորգի Ալեքսանյան

Արթուր Ալեքսանյանը ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 21-ին Գյումրիում: Հունահռոմեական ըմբշամարտով սկսել է զբաղվել 2000 թվականին իր հոր՝ Հայաստանի վաստակավոր մարզիչ Գյորգ Ալեքսանյանի ղեկավարությամբ: 2007-2010 թվականներին հանդես է եկել պատանեկան առաջնություններում: 2010 թվականին դարձել է Եվրոպայի արծաթե մեդալակիր յ աշխարհի չեմպիոն պատանիների 84 կգ քաշային կարգում:
2011 թվականին Արթուրը տեղափոխվեց ավելի ծանր քաշային կարգ: Հայաստանի առաջնությունում հաղթելուց հետո նա համալրեց Հայաստանի ազգային հավաքականի շարքերը (2011 թվականին նայ Հայաստանի սպորտի վարպետի կոչմանն է արժանացել): Նրա մեկնարկային առաջնությունը Դորտմունդում կայացած Եվրոպայի առաջնությունն էր, որտեղ նա հասավ մինչյ եզրափակիչ, սակայն պարտվեց բելառուս Մատվեյ Ձեյնիչենկոյին[18]: 2012 թվականի Եվրոպայի առաջնությունում նա նվաճեց ոսկե մեդալ: Այդ առաջնության ընթացքում նա հաղթեց 5 գոտեմարտում՝ մրցակիցներին տալով ընդամենը մեկ միավոր: Ապա Արթուրը հաղթեց Սոֆիայի լիցենզիոն առաջնությունում յ ստացավ Լոնդոնի օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք: Կիսաեզրափակչում նա պարտվեց ապագա օլիմպիական չեմպիոն Ռեզաի Գասեմին (Իրան), բայց հետագայում, հաղթելով Թուրքիան յ Կուբան ներկայացնող մարզիկներին, նվաճեց բրոնզե մեդալ[19]:Մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիայի հարցմամբ ճանաչվել է Հայաստանի 2014 յ 2015 թվականների լավագույն մարզիկ[20]: Նույն թվականին Տաշքենդում կայացած ըմբշամարտի աշխարհի առաջնությունում

նվաճել է ոսկե մեդալ:«Սպորտ. Հայ օլիմպիական չեմպիոններ. Արթուր Ալեքսանյան» թեմային նվիրված 1 նամականիշով գեղաթերթիկ:

2015 թվականի ապրիլի 25-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի ունեցած «Դան Կոլով յ Նիկոլա Պետրով» ամենամյա միջազգային մրցաշարի 98 կգ քաշային կարգում նվաճել է ոսկե մեդալ: Գրեթե չորս ամիս անց՝ օգոստոսի 8-ին, ԱՄՆ Լաս Վեգաս քաղաքում երկրորդ տարին անընդմեջ հռչակվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի չեմպիոն[3]: 2016 թվականի օգոստոսի 17-ին, Ռիոյի ամառային օլիմպիական խաղերում հռչակվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն՝ նվաճելով անկախ Հայաստանի պատմության երկրորդ օլիմպիական ոսկե մեդալը (Ատլանտայի օլիմպիական խաղերում Արմեն Նազարյանի նվաճած ոսկուց հետո): Հավելենք որ մոտ մեկ ամիս առաջ Բելգրադում ընթացող 2022 թվականի հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Արթուր Ալեքսանյանը չորրորդ անգամ նվաճեց աշխարհի չեմպիենի կոչումը :

Պարգևներ
Օլիմպիական խաղեր

Բրոնզ Լոնդոն 2012 96 կգ

Ոսկի Ռիո 2016 98 կգ

Արծաթ Տոկիո 2020 98 կգ

Աշխարհի առաջնություն

Արծաթ Բուդապեշտ 2013 96 կգ

Ոսկի Տաշքենդ 2014 98 կգ

Ոսկի Լաս Վեգաս 2015 98 կգ

Ոսկի Փարիզ 2017 98 կգ

Արծաթ Նուր-Սուլթան 2019 97 կգ

Ոսկի Բելգրադ 2022 98 կգ

Եվրոպայի առաջնություն

Արծաթ Դորտմունդ 2011 96 կգ

Ոսկի Բելգրադ 2012 96 կգ

Ոսկի Թբիլիսի 2013 96 կգ

Ոսկի Վանտա 2014 98 կգ

Արծաթ Ռիգա 2016 96 կգ

Բրոնզ Նովի Սադ 2017 98 կգ

Ոսկի Կասպիյսկ 2018 97 կգ

Ոսկի Հռոմ 2020 97 կգ

Պատանիների աշխարհի առաջնություն

Բրոնզ Անկարա 2009 84 կգ

Ոսկի Բուդապեշտ 2010 84 կգ

Լյոն Ջուլֆալակյան

Ծնվել է 1964 թվականի ապրիլի 5-ին Գյումրիում (նախկինում՝ Լենինական): Քանի որ երկու ծնողներն էլ մարմնամարզիկներ էին, վաղ տարիքից Լյոնը հաճախել է սպորտային մարմնամարզության, այնուհետյ սկսել է զբաղվել հունահռոմեական ըմբշամարտով Գյումրու մանկապատանեկան սպորտային դպրոցում: Իր ողջ մարզական կարիերայի ընթացքում մարզվել է Արամ Սարգսյանի ղեկավարությամբ:1983 թվականին հաղթել է ԽՍՀՄ-ի պատանեկան առաջնությունում, իսկ 1984 յ 1985 թվականներին՝ դարձել ԽՍՀՄ-ի մեծահասակների մրցաշարի մրցանակակիր: 1985 թվականին ընդգրկվել է ԽՍՀՄ-ի հավաքականի կազմի մեջ՝ դառնալով Աշխարհի առաջնության գավաթակիր, իսկ 1986 թվականին նվաճել է Եվրոպայի յ աշխարհի չեմպիոնի տիտղոսը:1985 թվականին ավարտել է Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական

ինստիտուտը[1]:1999 թվականից Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչն է ֆ հայ օլիմպիականների միության նախագահը: 2002 թվականից Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի փոխնախագահն է: Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի գործադիր անդամ է:Ապրում է Երֆանում: Լֆոն Ջուլֆալակյանի որդիները նույնպես լրջորեն զբաղվում են հունահռոմեական ըմբշամարտով: Ավագ որդին՝ Արսեն Ջուլֆալակյանը (ծնվել է 1987 թվականին), Եվրոպայի (2009) ֆ աշխարհի (2014) չեմպիոն է, Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր (2012):
Հիմնական մրցումներ ֆ զբաղեցրած հորիզոնականներ Տարի
Մրցաշար Զբաղեցրած հորիզոնական

1983 ԽՍՀՄ պատանիների առաջնություն 1

1984 ԽՍՀՄ երիտասարդների առաջնություն 1

1984 Եվրոպայի երիտասարդների առաջնություն 1

1985 Աշխարհի գավաթ 1

1986 Եվրոպայի առաջնություն 1

1986 Աշխարհի առաջնություն 1

1987 Գրան-պրի 2

1987 Գրան-պրի UWW 5

1988 Օլիմպիական խաղեր 1

1989 Աշխարհի առաջնություն 3

Պարգֆներ ֆ կոչումներ
1 «Ժողովուրդների բարեկամության շքանշան», «Պատվո նշան» շքանշան: 2 Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի ֆ սպորտի վաստակավոր գործիչ (2008):
3 «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի (24.12.2012)[4] ֆ երկրորդ աստիճանի (07.09.2016) մեդալ:

4Գյումրու պատվավոր քաղաքացի (2014):

Մնացական Իսկանդարյան

Մնացական Իսկանդարյանը ծնվել է 1967 մայիսի 17-ին Լենինականում (Գյումրի): Հունահռոմեական ըմբշամարտով սկսել է զբաղվել 1978 թվականից՝ Կորյուն Մովսեսյանի գլխավորությամբ: 1987 թվականին երիտասարդների շրջանում դարձել է աշխարհի չեմպիոն: 1988-1991 թվականներին ընդգրկված է եղել ԽՍՀՄ ազգային հավաքականի կազմում: 1989 թվականի դարձավ Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր: 1990 թվականին տեղափոխվեց ծանր քաշային կարգ յ դարձավ աշխարհի չեմպիոն, իսկ 1991 թվականին դարձավ յ՛ Եվրոպայի յ՛ աշխարհի չեմպիոն:

1992 թվականին ներկայացնելով Հայաստանը Միացյալ թիմում, հաղթեց Եվրոպայի առաջնությունը յ Օլիմպիական խաղերը Բարսելոնայում: Հետո հանդես եկավ Ռուսաստանի դրոշի ներքո: 1994 թվականին երրորդ անգամ դարձավ աշխարհի չեմպիոն: 1996 թվականին մասնակցեց Ատլանտայի Օլիմպիական խաղերին: Դրանից հետո ավարտեց սպորտային կարիերան յ անցավ մարզչական կարիերայի: 1996 թվականից համարվում է Ռուսաստանի երիտասարդական հավաքականի մարզիչը:

2012 թվականին ընդգրկված է եղել Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի(FILA) Փառքի տանը:

Արմեն Նազարյան



Ծնվել է 1974 թվականի մարտի 9 ին Մասիս քաղաքում:հայ նախկին հունահռոմեական ոճի ըմբշամարտիկ, Եվրոպայի վեցակի (1994, 1995, 1998, 1999, 2002, 2003 թթ.), աշխարհի եռակի (2002, 2003, 2005 թթ.) յ օլիմպիական խաղերի կրկնակի (1996, 2000 թթ.) չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, ՖԻԼԱ-ի փառքի սրահի անդամ:

Համարվում է անկախ Հայաստանի առաջին օլիմպիական ոսկե մեդալակիրը, ով 1996 թ. Ատլանտայի ամառային օլիմպիական խաղերում ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը, նվաճում է ոսկե մեդալ՝ հունահռոմեական ըմբշամարտի տղամարդկանց մինչյ 52 կգ քաշային կարգում:

Դրանից հետո Նազարյանը տեղափոխվում է Բուլղարիա յ այնտեղ 1997 թ. ստանում քաղաքացիություն: Հանդես գալով Բուլղարիայի դրոշի ներքո, Նազարյանը կարողանում է կրկին օլիմպիական ոսկե մեդալակիր դառնալ Սիդնեյի 2000 թ. օլիմպիական խաղերում:Ունի նայ մեկ օլիմպիական բրոնզե մեդալ (Աթենք 2004 թ.):Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻԼԱ-ն, Արմեն Նազարյանին երկու անգամ (1996 յ 2003 թվականներին) հռչակել է «Տարվա լավագույն ըմբիշ»:

2015 թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ Նախագահի հրամանագրով պարգյատրվել է

Երախտագիտության մեդալով:

Արսեն Ջուլֆալակյան

Արսեն Լյոնի Ջուլֆալակյան-ծնվել է մայիսի 8ին 1987թ Գյումրի քաղաքում:Հոր ղեկավարությամբ 1998 թվականից սկսել է զբաղվել ըմբշամարտով: 2001, 2003, 2004 թթ. դարձել է Հայաստանի պատանեկան առաջնության չեմպիոն: 2002 թ. պատանեկան Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր է, պատանիների 2003-2004 թթ. Եվրոպայի առաջնության հաղթող: 2004 թ. ճանաչվել է Եվրոպայի լավագույն պատանի մարզիկ: Եվրոպայի երիտասարդական առաջնության արծաթե(2005) ֆ բրոնզե (2006) մեդալակիր է: 2007 թ. Պեկինի աշխարհի երիտասարդական առաջնության հաղթողն է:Մեծահասակների Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն (2014) ֆ կրկնակի բրոնզե մեդալակիր(2012, 2019), Աշխարհի առաջնության արծաթե (2010) ֆ երկու անգամ բրոնզե մեդալակիր (2011, 2013): Աշխարհի գավաթի բրոնզե մեդալակիր (Կլերմոն Ֆերան, 2009): 2013 թվականի ուսանողական օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր (Կազան):2012 թվականին ճանաչվել է Հայաստանի լավագույն մարզիկ:2014 թ. դեկտեմբերի 22-ին Նյու Յորքի հանրահայտ «Մեդիսոն Սքվեր Գարդեն» կենտրոնում հաղթել է ԱՄՆ-ի

ուժեղագույն ըմբիշներից Քայլ Դեյքին՝ դառնալով Հայաստանը ներկայացնող առաջին մարզիկը, ով մրցել է այդ դահլիճում:2015 թվականի ապրիլի 24-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացած «Դան Կոլով ֆ Նիկոլա Պետրով» ամենամյա միջազգային մրցաշարի 75 կգ քաշային կարգում վաստակել է ոսկե մեդալ[2]: Հաղթանակը նվիրել է Եղեռնի զոհերի հիշատակին:

2009-2016 թթ. (7 տարի անընդմեջ) հանդես է եկել Գերմանիայի բարձրագույն ակումբային առաջնությունում KSV Aalen 05 ակումբի կազմում ֆ 2010 թվականին հռչակվել է Գերմանիայի չեմպիոն:2017 թվականից տեղափոխվել է Ֆրանսիայի ակումբային առաջնություն ֆ մինչ ֆ 2019 թ. հանդես եկել Բեզանսոն ակումբում: 2017 թվականին Ֆրանսիայի ակումբային առաջնության բրոնզե մեդալակիր է դարձել՝ անցկացնելով 10 գոտեմարտ ֆ տոնելով 10 հաղթանակ:

2017 թվականից հանդիսանում է Ըմբշամարտի համաշխարհային ֆեդերացիայի (United World Wrestling) մարզիկների հանձնաժողովի անդամ :Լյոն ֆ Արսեն Ջուլֆալակյանները միակ հայր ֆ որդին են, ում հաջողվել է մենապայքարային օլիմպիական մարզաձևում նվաճել ոսկի ֆ արծաթ ֆ դառնալ աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն: Արսենի կրտսեր եղբայրը՝ Արամ Ջուլֆալակյանը, ֆս զբաղվել է հունահռոմեական ոճի ըմբշամարտով: Պատանիների Եվրոպայի առաջնության արծաթե մեդալակիր է (2006) , երիտասարդների ֆ մեծահասակների Հայաստանի առաջնության չեմպիոն, միջազգային տարբեր մրցաշարերի հաղթող ֆ մրցանակակիր: 2016 թվականից հանդիսանում է Արսենի Ջուլֆալակյանի անձնական մարզիչը: Տարբեր տարիներին Արսենին մարզել են նաֆ Գագիկ Սարգսյանը ֆ Արամ Գասպարյանը:75 կգ քաշային Արսեն Ջուլֆալակյանի շնորհիվ 13 տարվա ընդմիջումից հետո Հայաստանը կրկին ունեցավ հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի չեմպիոն (2014, սեպտեմբերի 12):2014 թվականի սեպտեմբերին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում տեղի ունեցավ հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնությունը: Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Լյոն Ջուլֆալակյանի սանը՝ մինչ ֆ 75 կգ քաշային Արսեն Ջուլֆալակյանը, անցկացրեց հինգ գոտեմարտ ֆ նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը՝ եզրափակիչում 4:0 հաշվով պարտության մատնելով խորվաթ Նֆեն Ժուգային, իսկ եզրափակիչ հասնելուց առաջ հաղթելով ադրբեջանցի Էլվին Մուրսալիֆին (9:0), ավստրիացի Ֆլորիան Մաչլային (12:1), մեքսիկացի Խուան Էսկոբարին (11:2) ֆ վրացի Զուրաբ Դաթունաշվիլիին (1:0):

Միհրան Հարությունյան

Միհրան Հարությունյանը ծնվել է 1989 թվականի մարտի 25-ին Խորհրդային Հայաստանի Էջմիածին քաղաքում: 4 տարեկանում տեղափոխվել է Մոսկվա:Միհրան Հարությունյանը Մոսկվայում սկսել է զբաղվել հունահռոմեական ըմբշամարտով ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Արամ Սարգսյանի առաջնորդության ներքո: 2006 թվականին դարձել է Եվրոպայի պատանիների առաջնության հաղթող: 2008 յ 2009 թվականին արժանացել է մեդալների աշխարհի պատանեկան առաջնություններում :2011 թվականին Ռուսաստանի առաջնությունում նվաճել է արծաթե մեդալ յ հաղթել է Իսպանիայում յ Շվեդիայում միջազգային մրցաշարերի ժամանակ: 2012 թվականին արժանացել է Ռուսաստանի չեմպիոնի կոչմանը: Չնայած այս հաջողություններին՝ Ռուսաստանի ազգային հավաքականի մարզչական անձնակազմը հնարավորություն չի տվել Միհրան Հարությունյանին մասնակցելու 4 մրցաշարերից որյէ մեկին, որոնք Լոնդոնում օլիմպիական խաղերին մասնակցելու արտոնագիր էին տալիս, իսկ այն մասնակիցներին, որոնց այս հնարավորությունը տրվեց, չկարողացան ստանալ Ռուսաստանի համար օլիմպիական արտոնագիր մինչյ 66 կգ քաշային կարգում: Դրանից հետո Միհրանը որոշում է շարունակել իր կարիերան Հայաստանի դրոշի ներքո: 2013 թվականին դարձել է Հայաստանի չեմպիոն, սակայն մինչյ 2014 թվականի կեսերը երկու տարվա «կարանտինի» պատճառով չի մասնակցել կարյորագույն միջազգային մրցույթներին: Երկամյա «կարանտինը» կապված էր երկրի փոփոխության հետ: 2014 թվականի աշնանը մասնակցել է Տաշքենդում անցկացված աշխարհի առաջնությանը, որտեղ հաղթել է Շվեդիայի յ Թուրքիայի ըմբիշներին, այնուհետյ քառորդ եզրափակչում

պարտվեց հունգարացի Տամաշ Լյորինցուն ֆ չկարողացավ մտել հաղթողների շարք :Աշխարհի գավաթի ոչ հաջող ելույթից հետո ելույթ ունեցավ Բառնաուլի միջազգային մրցաշարին, որտեղ զբաղեցրեց առաջին տեղը ֆ մասնակցեց Մոսկվայում Սերգեյ Տարասկինի պատվին անց կացված 22-րդ համառուսական հունահռոմեական ըմբշամարտի մրցաշարին՝ նվաճելով առաջին տեղը: Սակայն այդ մրցաշարում ստացավ ծնկի վնասվածք, որի պատճառով չկարողացավ մասնակցել Հայաստանի հերթական առաջնությանը: Մրցաշարի մեկնարկից առաջ օրգանիզմի վիճակի կտրուկ վատթարացման պատճառով շտապ օգնության մեքենայով տեղափոխեցին հիվանդանոց, ֆ նա ստիպված է եղել դուրս գալ մրցույթից: :2015 թվականին 4 մարզիկների ֆ մարզչական կազմի անձնակազմով Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը ելույթ է ունենում Բաքվում Եվրոպական առաջին խաղում, որտեղ Միհրան Հարությունյանը զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը՝ չեմպիոնի տիտղոսի նվաճման համար պայքարում պարտվելով ռուս ըմբիշի: Բաքվի մրցաշարից վերադարձած Հայաստանի հունահռոմեական ըմբշամարտի պատվիրակությանը դիմավորեցին հերոսների նման: Միհրան Հարությունյանը Ռիո դե Ժանեյրոյում 2016 թվականին անցկացված օլիմպիական խաղերում դարձել է արծաթե մեդալակիր:

Մաքսիմ Մանուկյան

Մաքսիմ Մանուկյանը ծնվել է 1987թ դեկտեմբերի 10 ին Մարտունի քաղաքում , հունահռոմեական ոճի հայ ըմբիշ, աշխարհի չեմպիոն, 2013 թվականի Ունիվերսիադայի արծաթե մեդալակիր, զինծառայողների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, լողափնյա ըմբշամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, 2016 թվականի օլիմպիական խաղերի մասնակից:Մաքսիմը ըմբշամարտով զբաղվել է 1998 թվականից, սակայն որոշ ժամանակ անց դադարեցրել է պարապմունքները յ վեց տարվա ընդմիջումից հետո կրկին վերադարձել է 2010 թվականի մարզումներին:2011 թվականին նորամուտը նշել Է Թբիլիսիի միջազգային մրցաշարում, սակայն անհաջող:2013 թվականին Կազանի Ունիվերսիադայում ներկայացրել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի յ սպորտի պետական ինստիտուտը, որտեղ ստացել է արծաթե մեդալ՝ եզրափակչում զիջելով այդ պահին գործող ռուս օլիմպիական չեմպիոն Ալան Խուգայֆին:2015 թվականին Բաքվում

կայացած առաջին Եվրոպական խաղերում զբաղեցրել է միայն 5-րդ տեղը, սակայն այդ մրցաշարում նրա նետումը, որը կատարվել է ադրբեջանցի մարզիկի դեմ, ըմբշամարտի Միացյալ աշխարհը ճանաչել է «Տարվա լավագույն հնարք»:2016 թվականին որակավորման փուլի շնորհիվ դուրս է եկել Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք Օլիմպիական խաղերին, սակայն առաջին շրջանում 3-0 հաշվով պարտվել է հունգարացի Վիկտոր Լերինցին ֆ դուրս մնացել մրցաշարից[:2017 թվականին Փարիզում կայացած աշխարհի առաջնությունում իրականացրեց իր վաղեմի երազանքը՝ նվաճելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Կիսաեզրափակիչում հայ ըմբիշը 1 րոպե 55 վայրկյանում 7:0 հաշվով հաղթել է Եվրոպայի գործող չեմպիոն Զուրաբ Դատունաշվիլիին, իսկ եզրափակչում 5:0 հաշվով հաղթել է բելառուսցի Ռադիկ Կուլիֆին[5]: Այս հաղթանակի համար նա ստացել է «Սպորտի զարգացման գործում նշանակալի ավանդի ֆ նվիրվածության համար» մրցանակ: Մանուկյանը դարձել է «Հայկյան 2017» մրցույթի դափնեկիր: Մրցանակը հայ ըմբիշին հանձնել է ՀՀ 3-րդ նախագահ՝ Սերժ Սարգսյանը:

Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշանով (07.09.2017):

ՌՈՄԱՆ ԱՄՈՅԱՆ



Ռոման Ամոյանը ծնվել է 1983 թվականի սեպտեմբերի 3-ին Երյանում, եզդիների ընտանիքում: Հունահռոմեական ըմբշամարտով զբաղվել սկսել է տասը տարեկան հասակում Հարություն Խաչատրյանի գլխավորությամբ: 2001 թվականին դարձել է աշխարհի երիտասարդական առաջնության, 2002 թվականին՝ Եվրոպայի երիտասարդական առաջնության հաղթող:

2003 թվականին Ռոման Ամոյանը նվաճել է արծաթե մեդալ Բելգրադում անցկացվող Եվրոպայի առաջնությունում: 2005 յ 2008 թվականների Եվրոպայի առաջնություններում նա նույնպես արժանացել է արծաթե մեդալների, իսկ 2006 թվականին դարձել է Եվրոպայի չեմպիոն:

2008 թվականին Ռոման Ամոյանը նվաճել է բրոնզե մեդալ Պեկինում անցկացվող Ամառային օլիմպիական խաղերում: Հաղթելով Ղազախստանի ներկայացուցիչ Ասետ Իմանբային յ Վրաստանի ներկայացուցիչ Լաշա Գոգիտաձեին՝ Ռոման Ամոյանը կիսաեզրափակչում զիջել է ադրբեջանցի Ռովշան Բայրամովին: Բրոնզե մեդալի համար կայացած մարտում Ամոյանը

վստահ հաղթանակ է տարել Կուբան ներկայացնող Յագնիեր Էռնանդեսի նկատմամբ: Ամոյանի նվաճած մեդալը դարձել է հայ ըմբշամարտիկների նվաճած առաջին օլիմպիական մեդալը վերջին 16 տարիների ընթացքում:

2009 թվականին Ռոման Ամոյանը դարձել է աշխարհի առաջնության արծաթե, իսկ 2010 թվականին՝ բրոնզե մեդալակիր: 2011 թվականին Ռոման Ամոյանը Եվրոպայի առաջնությունում ստացել է գլխի ծանր վնասվածք, սակայն արյունոտ վիրակապով շարունակել է մարտը յ երկրորդ անգամ դարձել Եվրոպայի չեմպիոն[4]: Նույն թվականին նա ընտրվել է Հայաստանի տարվա մարզիկ:

Ռոման Ամոյանը չի կարողացել որակավորվել 2012 թվականի Ամառային օլիմպիական խաղերին մասնակցելու համար: 2013 թվականի աշխարհի առաջնությունում նա նվաճել է բրոնզե, իսկ 2016 թվականի Եվրոպայի առաջնությունում՝ արծաթե մեդալներ:

Մրցանակներ

Օլիմպիական խաղեր
Պեկին 2008 բրոնզ
Աշխարհի առաջնություններ
Հերնինգ 2009 արծաթ
Մոսկվա 2010 բրոնզ
Բուդապեշտ 2013 բրոնզ
Եվրոպայի առաջնություններ
Բելգրադ 2003 արծաթ
Վառնա 200 արծաթ
Մոսկվա 2006 ոսկի
Տամպերե 2008 արծաթ
Դորտմունդ 2011 ոսկի Ռիգա
2016 արծաթ: